15
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2021

Luys Lnyu®

2017-2021ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ԵՐԵՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Երկրի տնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի այն միջավայրը, որը ձևավորվել է բիզնեսի գործունեության և դրա զարգացումն ապահովելու համար: Հայաստանի անկախության տարիներից ի վեր կառավարությունները ձեռնարկել են տնտեսական, սոցիալական և իրավական բարեփոխումներ, որոնց նպատակներից էր նաև գործարարության զարգացումը երկրում: Այս բարեփոխումները և կատարված քայլերը նպաստել են գործարար միջավայրի ձևավորմանը և դրա զարգացմանը: Սակայն այդ գործընթացը պետք է կրի շարունակական բնույթում՝ հաշվի առնելով երկրի տնտեսական զարգացման վրա ազդող բազմաթիվ, այդ թվում՝ արտաքին տնտեսական գործոնները: Դրանով է պայմանավորված գործարար միջավայրի բարելավմանն ու զարգացմանն ուղղված քաղաքականության և ծրագրային դրույթների առկայությունը կառավարությունների ծրագրերում:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) կարևոր դերակատարում ունի երկրի տնտեսական զարգացման գործում: Ըստ 2018թ. տվյալների՝ ՓՄՁ-ները կազմում են տնտեսության գործարար հատվածի բոլոր ձեռնարկությունների ավելի քան 99.8%-ը, որտեղ գերակշիռ մաս են կազմում միկրոձեռնարկությունները: ՓՄՁ-ներին է բաժին ընկնում գործարարության ոլորտում ընդհանուր զբաղվածության 68%-ը, և ՓՄՁ-ներն են ստեղծում բիզնես հատվածի ավելացված արժեքի մինչև 60%-ը: Ակնհայտ է, որ ՓՄՁ ոլորտի զարգացումը, փոքր և միջին ձեռնարկատերերի աջակցությունը և նրանց գործունեության խրախուսումը պետք է լինեն պետության մշտական ուշադրության կենտրոնում:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «2017-2021թթ. ընթացքում ՀՀ երեք կառավարությունների ծրագրային դրույթներով իրականացված աշխատանքների համեմատություն» շարքի երկրորդ վերլուծական նյութը՝ ներկայացնելով գործարար միջավայրի բարելավմանը և ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված երեք կառավարությունների ծրագրային դրույթները և դրանց իրականացման նպատակով ձեռնարկված քայլերը: Ինչպես և մյուս վերլուծություններում, ուսումնասիրվել է միայն տվյալ կառավարության գործունեության ժամանակահատվածի համար նախատեսված քայլերը և կատարված աշխատանքները: Մինչ այս, արդեն իսկ հրապարակվել են ԵՄ և ԵԱՏՄ հետ տնտեսական համագործակցության ուղղությամբ երեք կառավարությունների ներկայացրած ծրագրային դրույթների իրականացման վերաբերյալ վերլուծությունները:

ՄԱՍ Ի. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ կառավարության ծրագիր 2017-2022թթ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019-2024թթ.	ՀՀ կառավարության ծրագիր 2021-2026թթ.
1. Գործարար միջավայրի բարելավման տարեկան ծրագրերի իրականացումը հետևողականորեն շարունակելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • Մինչև 2017 թվականի ավարտն ապահովել բնապահպանական և բնօգտագործման հաշվարկ-հաշվետվություններն ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարողությունները՝	• Տնտեսական քաղաքականության որակի և գործարար միջավայրի վրա դրա ազդեցության գնահատականները դիտարկվելու են միջազգայնորեն ընդունված և ճանաչում ունեցող ընդհանրական ինդեքսների միջոցով: Մասնավորապես, օգտագործվելու են Համաշխարհային տնտեսական ֆորումի Գլոբալ մրցունակության ինդեքսը և Ներառական զարգացման ինդեքսը, Համաշխարհային բանկի՝ «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի գնահատումը և այլն: • Ենթակառուցվածքների հասանելիության սահմանափակումները չպետք է ստեղծեն այնպիսի իրավիճակ, երբ տնտեսավարողների միջև կարող են ստեղծել անհավասար մրցակցային պայմաններ:	• Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման համար կառավարությունը քայլեր է ձեռնարկելու արժեթղթերի նոր շուկաներ ստեղծելու ուղղությամբ: • Աջակցություն է տրամադրվելու ընկերություններում արդիական կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման և լրացուցիչ խթանների միջոցով այդ ընկերությունների զարգացման համար: • Բարելավվելու է աշխատանքային օրենսդրությունը, մասնավորապես գործատու-աշխատող պայմանագրային հարաբերությունների այնպիսի կարգավորումներ կսահմանվեն, որոնք նպաստում են և՛ բիզնեսի, և՛ մասնագետի կայուն զարգացմանը: • Պարզեցվելու են բարձր որակավորում կամ հատուկ գիտելիքներ ունեցող օտարերկրյա մասնագետների ներգրավման ընթացակարգերը: • Ներդրողների համար ապահովվելու է տնտեսական ենթակառուցվածքների առավելագույն հասանելիություն:

ամբողջականացնելով հարկային հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգը. • մինչև 2017 թվականի ավարտը կրճատել էլեկտրականության միացման գործընթացում պահանջվող գործողությունները: 2. Տնտեսական մրցակցության պաշտպանության մեխանիզմների կատարելագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • մինչև 2017 թվականի ավարտն ապահովել գերիշխող դիրքի չարաշահում որակելու դեպքերի օրենսդրական հստակեցում:	Կարգավորումների հստակեցումը և դրանցով պահանջվող՝ ժամանակային և ֆինանսական ծախսերի առավելագույն կրճատումը պետք է լինի այս ուղղությամբ կառավարության գերակայություններից մեկը: • Կարևոր հարց է նաև շինարարական թույլտվությունների ստացումը: Նշված ընթացակարգերին առնչվող կազմակերպությունների և պետական կառույցների գործառույթների հստակեցումը լինելու է այս ուղղությամբ կառավարության հիմնական թիրախներից մեկը: • Բիզնեսի զարգացման էական խոչընդոտ է այն իրողությունը, որ Հայաստանում անվճարունակության (սնանկացման) վարույթների ճնշող մեծամասնությունն ավարտվում է ձեռնարկությունների լուծարմամբ: Կառավարությունը կարևորում է իրավիճակի շրջադարձային փոփոխությունը, խրախուսելու է այնպիսի օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունները, որոնց արդյունքում անվճարունակության վարույթներում հայտնված կազմակերպություններն ավելի հաճախ պետք է հասնեն ֆինանսական առողջացման և պահպանեն գործելու հետագա իրավունքը:	Համաձայն կառավարության սահմանած կարգի՝ այս նպատակի համար 5 տարվա ընթացքում տրամադրվելու է առնվազն 50 մլրդ դրամ: • Նորարարական աջակցության գործիքակազմի միջոցով չեզոքացվելու են տնտեսությունում առկա ռիսկերը՝ տնտեսական բարդություն ապահովող ներդրումային ծրագրերի համար: • Մասնավոր հատվածում գիտահետազոտական աշխատանքները, գյուտարարությունն ու նորարարությունը խրախուսելու նպատակով ստեղծվելու են արտոնագրված գյուտերի առևտրայնացումից ստացվող եկամուտների հարկման առավել խրախուսող մեխանիզմներ: • Իրականացվելու են շուկայական ուսումնասիրություններ՝ թիրախավորելով ներդրումային գրավչության և ծրագրերի մշակման համար առանցքային տեղեկատվության բացահայտումը: Ուսումնասիրությունները համատարած հասանելի կլինեն Հայաստանի և օտարերկրյա ներդրողների համար՝ ապահովելով ներդրումային որոշումների կայացման արագացումը: • Մշակվելու է թվային տնտեսության հայեցակարգը՝ թիրախավորելով տնտեսավարողների թվային կարողությունների զարգացումը, թվային տնտեսության համար առանցքային ենթակառուցվածքների հասանելիության և որակի բարձրացումը, ինչպես նաև տեղեկատվության հասանելիությանը առնչվող կարգավորումների ճկունությունը: • Մշակվելու է մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարությունը՝ ստեղծագործական և ներդրումային բարենպաստ միջավայր ստեղծելու, մտավոր սեփականության իրավունքի արդյունավետ և հուսալի

		պահպանություն և պաշտպանություն ապահովելու նպատակով: • Հայաստանի տնտեսության մեջ կանանց և երիտասարդների ազդեցությունը բարձրացնելու նպատակով իրականացվելու են միջազգային շուկաներում վերջիններիս գործարար կապերի և մրցունակ կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր:

2018 թվականին տեղի ունեցած իշխանափոխության գործընթացն ուղեկցվում է գործարար միջավայրին առնչվող սուր քննադատությամբ և բոլորի համար հավասար տնտեսավարման հնարավորությունների ստեղծման, ներդրումների և տնտեսական աճի խոստումներով: Սակայն ի՞նչ է իրականում կատարվել, և ի՞նչ արդյունքների են հասել վերջին երեք կառավարությունները:

2017 թվականի կառավարությունը ամբողջությամբ իրականացրել է գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ 2017 թվականի համար նախատեսված աշխատանքները: Այսպես, 2017 թվականի դեկտեմբերին ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հայտարարեց բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորության մասին[1]: Նույն տարեթվին իրականացված բարեփոխումների արդյունքում դյուրացվեց նաև էլեկտրականության միացման գործընթացը, ինչը ներկայացված է նաև «Գործարարությամբ զբաղվելը» 2018 թվականի զեկույցում[2]:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2017 թվականի դեկտեմբերի 8-ին կատարված փոփոխությամբ հստակեցվեցին նաև գերիշխող դիրքին առնչվող օրենսդրական կարգավորումները:

Տրված խոստումների կատարում չի կարելի, սակայն, վերագրել 2019 թվականի կառավարությանը: COVID-19-ի համավարակի պատճառով 2021 թվականին «Doing Business» զեկույցը չի հրապարակվել, իսկ համաձայն 2020 թվականի զեկույցի (հրապարակված է 2019թ. հոկտեմբերին)՝ Հայաստանը գտնվում է 47-րդ հորիզոնականում՝ զիջելով Վրաստանին

[1] https://petekamutner.am/mdNews.aspx?sid=src&nid=4639
[2] https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf

(7-րդ հորիզոնական), Ղազախստանին (25-րդ հորիզոնական), Ռուսաստանին (28-րդ հորիզոնական), Թուրքիային (33-րդ հորիզոնական), Ադրբեջանին (34-րդ հորիզոնական): Հաշվի առնելով, որ 2020 թվականի ընթացքում COVID-19-ի, այնուհետև նաև պատերազմի պատճառով պետական կառավարման համակարգը բնականոն չի գործել, հաջորդ զեկույցում Հայաստանի դիրքի առաջխաղացում ակնկալելը իրատեսական չէ: 47-րդ հորիզոնականը չի բնութագրվում նաև գործարար միջավայրի դրական փոփոխությունները:

Էլեկտրականության, գազի և ջրի օգտագործման թույլտվությունների միացման և քաղաքաշինական թույլտվությունների ստացման ժամանակային և ֆինանսական ծախսերի կրճատման ուղղությամբ որևէ տեսանելի քայլ չի իրականացվել: Ավելին, «Էլեկտրականության միացման» ցուցիչով Հայաստանը հետընթաց է գրանցել Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը 2020» զեկույցում՝ նախորդ տարվա 17-րդ տեղից իջնելով 30-րդ տեղ:

Սնանկության գործընթացի արդյունավետության բարձրացման, այդ թվում՝ ֆինանսական առողջացման դեպքերի ավելացման համար հիմքերի ստեղծման նպատակով դեռևս 2017 թվականի կառավարության կողմից սկսվել էր «Սնանկության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի մշակման գործընթացը: Ու թեև այդ փաթեթը դեռևս 2019 թվականին ներկայացվել էր ՀՀ Ազգային ժողով, այն մինչ օրս չի ընդունվել: Հետևաբար այս խոստումը ևս չի կատարվել:

2017 և 2019 թվականների կառավարությունները մշակել են նաև գործարար միջավայրի բարելավման միջոցառումների տարեկան ծրագրեր (2017 և 2019 թվականների համար), ինչպես նաև միջոցառումների եռամյա ծրագիր 2020-2023 թվականների համար: Բոլոր դեպքերում էլ, սակայն, բացակայում է այդ ծրագրերի իրականացման թափանցիկությունը և հրապարակայնությունը: Ճիշտ է, ըստ միջոցառումների ծրագրերի, բոլոր պատասխանատու մարմինները պարտավոր են դրանց իրականացման մասին հաշվետվություններ ներկայացնել էկոնոմիկայի նախարարություն, իսկ վերջինս՝ ՀՀ կառավարություն (ի դեպ, 2017 թվականի ծրագրով դա պետք է արվեր եռամսյա պարբերականությամբ, իսկ հաջորդ տարիների ծրագրերով՝ ամենամսյա պարբերականությամբ), սակայն դրանց արդյունքները այդպես էլ չեն հրապարակվում:

2019 թվականի կառավարության գործունեությունն աչքի է ընկնում նաև գործարար համայնքի հետ շփումների ցածր մակարդակով և փոքր ու միջին ձեռնարկատերերի հարցերի քննարկման հետաքրքրության բացակայությամբ:

Այսպես, թեև 2020 թվականի օգոստոսին ՀՀ կառավարությունն ընդունեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների

ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, սակայն ոչ մինչ այդ որոշման ընդունելը և ոչ էլ դրանից հետո, մինչև 2021 թվականի փետրվարը չեն կայացել ՀՀ կառավարության և ՎԶԵԲ-ի համատեղ նախաձեռնությամբ ստեղծված Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի նիստեր: Խորհրդի նիստը կայացել է միայն 2021 թվականի փետրվարի 19-ին՝ 2017 թվականի հուլիսի 7-ին կայացած վերջին նիստից գրեթե երեք տարի անց:

2020 թվականին COVID-19-ի համավարակի բռնկումը և դրանով պայմանավորված սահմանափակումներն ավելի բարդացրին գործարար համայնքի վիճակը: Կառավարության կողմից մշակված աջակցության միջոցառումները ընդհանուր առմամբ չէին ծառայում իրենց նպատակներին, տնտեսական մասով հիմնականում վարկերի տեսքով էին, որոնք, մեծ հաշվով, բիզնեսին աջակցելու անվան տակ միտված էին բանկային համակարգի կայունության պահպանմանը և ոչնչով չէին թեթևացնում բիզնեսի բեռը:

COVID-19-ի հետևանքները չեզոքացնող միջոցառումների ուսումնասիրությունից կարելի է փաստել, որ դրանք հիմնականում լավ չհաշվարկված և հապճեպ են եղել՝ հաշվի չառնելով հետագա հնարավոր զարգացումները: Այս ամենը ավելի է բարդացրել գործարար համայնքի վիճակը և գործարար միջավայրը:

Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված նոր կառավարության ծրագրային որոշ դրույթներ դեռևս անհասկանալի են և հետագայում նույնիսկ ոչ չափելի: Այսպես, անհասկանալի է, թե ինչպիսի ծրագրեր է նախատեսում կառավարությունը միջազգային շուկաներում կանանց և երիտասարդների գործարար կապերի և մրցունակ կարողությունների զարգացման նպատակով: Ցանկացած մանր քայլ, նույնիսկ հասարակ դասավանդումը կամ տեղեկատվության տրամադրումը կարող է համարվել ծրագիր, որը, սակայն, չի ապահովի անհրաժեշտ արդյունքներ: Կամ «իրականացվելու են շուկայական ուսումնասիրություններ՝ թիրախավորելով ներդրումային գրավչության և ծրագրերի մշակման համար առանցքային տեղեկատվության բացահայտումը»: Անհասկանալի է, թե ինչ միջոցներով և ում կողմից է իրականացվելու այս ուսումնասիրությունները, ինչպիսի տեղեկատվություն դրանք պետք է պարունակեն և ինչպես դրանք պետք է նպաստեն ներդրողների կողմից որոշումների կայացման արագացմանը:

Կան այլ դրույթներ ևս, որոնց իրականացումը դեռևս անհասկանալի է: Հույս ունենանք, որ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը կհստակեցնի դրանց իրականացման մոտեցումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրականացված վերլուծությունը վկայում է, որ 2017 թվականի կառավարությունը իր գործունեության ընթացքում կարևոր տեղ էր հատկացնում գործարար միջավայրի բարելավմանը: Կառավարությունը հստակ սահմանել էր, թե ինչ քայլեր է ձեռնարկելու, ինչը կարևոր է գործարար համայնքի համար՝ պետական քաղաքականության կանխատեսելիության և ապագա գործունեության պլանավորման տեսանկյունից: Կառավարությունը ձեռնարկել էր նաև բոլոր անհրաժեշտ քայլերը 2017 թվականի պլանավորված աշխատանքները կատարելու նպատակով, ինչը պսակվել է հաջողությամբ:

Նույնը չի կարելի ասել 2019 թվականին ձևավորված կառավարության մասին: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս կառավարությունը աչքի չի ընկել գործարար համայնքի հետ ակտիվ շփումներով և նրանց խնդիրների վերհանումով, նկատվել է նաև փոքր և միջին ձեռնարկատերերի հարցերի նկատմամբ հետաքրքրության բացակայություն: Մի քանի խոշոր գործարարների հետ հանդիպումները բավարար չեն գործարար միջավայրի գնահատման և բարելավման համար: Գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ 2019 թվականի կառավարության խոստումների և գործունեության մանրամասն վերլուծությունը, որը հրապարակվել է դեռևս 2019 թվականին դրա վառ վկայությունն է:

COVID-19-ը և Արցախյան 44-օրյա պատերազմը ավելի բարդացրին գործարար համայնքի կյանքը, իսկ կառավարության ծրագրերը և գործունեությունը էական դրական ազդեցություն չունեցան գործարար միջավայրի բարելավման հարցում:

Ճիշտ է, այսօր կառավարության որոշ ներկայացուցիչներ փորձում են գործարար համայնքի հետ շփումների միջոցով հասկանալ նրանց խնդիրները և դրանց լուծման ուղիները, սակայն, հիմք ընդունելով նախկին դառը փորձը և նախկին կառավարության (որի անդամների որոշ մասը շարունակում է գործել նաև այսօր) գործունեության դանդաղկոտությունը, խոստումների իրականացման նկատմամբ անտարբերությունը, կարծում ենք, որ դեռևս լուրջ զարգացումներ գործարար միջավայրի բարելավման առումով չի կարելի ակնկալել:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2017 թվականին ՀՀ կառավարությունն ամբողջությամբ իրականացրել է գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ իր ծրագրով նախատեսված գործողությունները:
2. 2019 թվականին ընտրված կառավարությունը իր գործունեության ընթացքում չի ապահովել միջազգայնորեն ընդունված ինդեքսներում, մասնավորապես «Գործարարությամբ զբաղվելը» ինդեքսում Հայաստանի առաջընթացը:
3. 2019 թվականին ընտրված կառավարությունը չի իրականացրել սնանկության գործընթացներին առնչվող խոստացված օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունները:
4. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի նիստը, որը կարևոր է ՓՄՁ և ձեռնարկատիրության ոլորտում ծագած հարցերի քննարկման և կարգավորման համար, կայացել է միայն 2021 թվականի փետրվարին՝ վերջին նիստից (2017 թվականի հուլիս) մոտ երեք տարի անց:
5. 2021 թվականին ընտրված կառավարության ծրագրային որոշ դրույթներ անհասկանալի են և հետևաբար՝ անչափելի: Չկան հստակ արդյունքներ, իսկ նախատեսված քայլերը շատ ընդհանրական են ձևակերպված: Հետևաբար, այսօրվա դրությամբ, գործարար միջավայրի բարելավման առումով լուրջ զարգացումներ չի կարելի ակնկալել:

ՄԱՍ II. ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ կառավարության ծրագիր 2017-2022թթ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019-2024թթ.	ՀՀ կառավարության ծրագիր 2021-2026թթ.
3. Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության և զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • մինչև 2018 թվականի ավարտը ձևավորել ՓՄՁ-ի ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման	• Կաջակցվեն «զրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող քաղաքացիների հմտությունների զարգացումը և նրանց ծրագրերի իրագործումը՝ գործնական միջանցք ապահովելով նոր գործարար նախաձեռնությունների իրականացման համար: Այդ նպատակով կհամագործակցենք ՓՄՁ-ի հանրության շահերը ներկայացնող հասարակական	• Ընդլայնվելու է սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմը՝ նորարար ձեռներեցների համար զգալիորեն բարձրացնելով ֆինանսների, ձեռնարկատիրական հմտությունների ու կապերի, ինչպես նաև գիտելիքի հասանելիությունը: • Ներառական տնտեսության տեսանկյունից ՓՄՁ–ների դերի մեծացման հրամայականից ելնելով՝ կառավարությունը ակտիվորեն աջակցելու է ՓՄՁ–ների զարգացմանը՝ 5 տարիների ընթացքում ՓՄՁ–ների մասնաբաժինը ՀՆԱ–ում հասցնելով 55%–ի: • ՓՄՁ զարգացման համար կառավարության հիմնական քայլերն ուղղվելու են ՀՆԱ-ում ՓՄՁ-ների տեսակարար կշռի աճին և համաչափ

ինստիտուցիոնալ հնարավորությունները և 2019 թվականին հրապարակել վիճակագրական տեղեկատվությունը. • մինչև 2018 թվականի ավարտը մշակել և ներդնել ՓՄՁ-ի սուբյեկտների նոր պահանջներին համապատասխան պետական աջակցության նոր գործիքակազմ, այդ թվում՝ խորացնել ՓՄՁ-ի ոլորտում աջակցության ծրագրեր իրականացնող միջազգային կառույցների հետ համագործակցությունը:	կառույցների հետ, մասնավորապես՝ տարածքային ձեռներեցության կենտրոններ ձևավորելու և զարգացնելու միջոցով: • Մինչև 24 մլն դրամ իրացման շրջանառությամբ միկրո ձեռնարկություններն ազատված կլինեն շրջանառության և եկամտային հարկերից, որը բացի սոցիալական կարևոր նշանակությունից, կստանա գործարար փոքր գաղափարները ձեռնարկատիրական մեծ ծրագրերի «տրանսֆորմացնելու» էական նշանակություն: • Կառավարությունը կարևորելու է նաև ՓՄՁ-ի խոշորացման այլ խթանների համակարգի զարգացումը: • Մեծ նշանակություն է տրվելու նաև ՓՄՁ-ի սուբյեկտների համար ֆինանսների հասանելիության բարձրացման ուղղությամբ ծրագրերի իրականացմանը:	տարածքային զարգացմանը: Այդ նպատակով իրականացվելու են հետևյալ աշխատանքները՝ o Ձեռնարկվելու են քայլեր՝ ուղղված ՓՄՁ խրախուսմանը, մասնավորապես ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման ու կարողությունների ձևավորման միջոցով: o Ստեղծվելու է տեխնոլոգիաների և գյուտերի առևտրայնացման կառույց: o Իրականացվելու են միջոցառումներ «Made in Armenia» բրենդի կայացման, մասնավորապես՝ միջազգային շուկաներում հայաստանյան արտադրողների ներկայացվածության և ճանաչելիության աստիճանի բարձրացման ուղղությամբ: Այս նպատակով կառավարությունը հատկապես ուշադրության կենտրոնում է պահելու ՓՄՁ–ների շրջանակում տեղական արտադրանքի միասնական բրենդի մշակումն ու առաջխաղացումն արտաքին շուկաներում: o Մշակվելու է «Արտադրել Հայաստանում» հայեցակարգը՝ խթանելով օտարերկրյա ընկերությունների ներգրավումը: o Ստեղծվելու է սոցիալական նորարարության աջակցության կենտրոն՝ միտված սոցիալական ձեռներեցության և սոցիալական միջավայրի զարգացմանը: o Ներառական աշխատուժի համար վերապատրաստման և վերաորակավորման միջոցով իրականացվելու են սոցիալական համակարգի կատարելագործմանն ուղղված քայլեր: o Տնտեսության տարբեր ոլորտներում ստեղծվելու են կանանց ներգրավման, մասնավորապես աշխատանքը և մայրությունը համատեղելու համար առավել լայն հնարավորություններ: o Ձեռնարկվելու են միջոցներ գյուղերում ոչ գյուղատնտեսական ձեռնարկատիրության խրախուսման ու ոչ գյուղատնտեսական հմտությունների ձեռքբերման համար նպաստավոր պայմանների ստեղծման, մասնավորապես ներկայումս մեծ պահանջարկ ունեցող հմտությունների ձևավորման ու զարգացման ուղղությամբ:

		o ՓՄՁ զարգացման ոլորտում, մասնավորապես գործառնական լիազորությունների տրամադրմամբ, կառավարությունը նպաստելու է ոլորտային ասոցիացիաների ստեղծմանը, զարգացմանն ու կայացմանը: o Կրթական համակարգի տարբեր փուլերում ներդրվելու են ձեռնարկատիրական ունակությունների զարգացման դասընթացներ:

ՓՄՁ-ի ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման անհրաժեշտության մասին բազմիցս նշվել է ինչպես տարբեր միջազգային զեկույցներում, այնպես էլ ոլորտի մասնագետների և կառույցների կողմից, ինչն իր արտահայտությունն էր գտել 2017 թվականի կառավարության ծրագրում: Այդ աշխատանքը, սակայն, նախատեսված էր ավարտին հասցնել 2018 թվականի վերջին, ինչը դադարեցվեց 2018 թվականի իշխանափոխությունից հետո: Իշխանափոխությունից հետո ըստ էության դադարեցվեց նաև կառավարության մյուս գործողության իրականացումը՝ ՓՄՁ-ի սուբյեկտների նոր պահանջներին համապատասխան պետական աջակցության նոր գործիքակազմի մշակումը և միջազգային կառույցների հետ համագործակցության խորացումը: Դա պայմանավորված էր Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման աջակցության կենտրոնում իշխանափոխությունից հետո սկսված փոփոխություններով, ինչը հետագայում հանգեցրեց այդ կենտրոնի վերանվանմանը և գործառույթների փոփոխությանը:

ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1443-Լ որոշմամբ ընդունվեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը»: Այսինքն՝ ավելի քան մեկ տարի 2019 թվականի կառավարությունը չի ունեցել ՓՄՁ ոլորտի զարգացման որևէ ռազմավարական մոտեցում և առաջնորդվել է դեռևս նախորդ կառավարությունների կողմից մշակված գործիքակազմով և ծրագրային մոտեցումներով: Հաշվի առնելով նաև, որ այս կառավարությունը հայտարարել էր «տնտեսական հեղափոխության» և զարգացման նոր տեսլականի մասին, բավականին տարօրինակ է նախորդ կառավարության ռազմավարությամբ գործելը:

Ավելին, 2018-2019 թվականները շրջադարձային էին ՓՄՁ ոլորտի ինստիտուցիոնալ կառույցների գործունեության առումով: Նախ այս ընթացքում նվազել է ՓՄՁ ԶԱԿ-ին (վերանվանված՝ Ներդրումների աջակցության կենտրոնին) ոլորտի զարգացման նպատակով միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված աջակցությունը: Այսօր էլ,

Ներդրումների աջակցության կենտրոնի կայքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործող ծրագրերի մեծամասնությունը նախաձեռնվել էին մինչև 2018 թվականը: Իհարկե, 2020 թվականի COVID-19-ով պայմանավորված ՀՀ կառավարության կողմից մշակվեց և ներդրվեց «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառումը», որի նպատակն է «ձեռնարկատիրական գիտելիքների ընդլայնման և ֆինանսների հասանելիության բարձրացման միջոցով նպաստել «զրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող շահառուների ձեռնարկատիրական գաղափարների իրագործմանը և շահառուների գործարար ծրագրերի նորարարական զարգացմանը», սակայն դա չի իրականացվել ՓՄՁ-ի հանրության շահերը ներկայացնող հասարակական կառույցների հետ համագործակցության և տարածքային ձեռներեցության կենտրոններ ձևավորելու միջոցով: Ավելին, 2019 թվականին ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի աշխատողների թվաքանակի կրճատումը՝ 2018թ. 22-ից 2019թ. նվազեցնելով մինչև 10 մարդ, չի տեղավորվում ՓՄՁ-ների աջակցության վերաբերյալ կառավարության խոստումների շրջանակում: Այս համատեքստում անիմաստ է խոսել նաև տարածքային ձեռներեցության կենտրոնների մասին, որոնց ձևավորելու դրույթը մնացել է միայն թղթին գրված դրույթ:

2020 թվականի օգոստոսին ընդունված Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը նախատեսում է ՓՄՁ զարգացմանն ուղղված մի շարք գործիքների ներդրում (օրինակ՝ երաշխավորությունների հիմնադրամի դրամագլխի ավելացում, բանկային համակարգի հետ ռիսկերը կիսելու եղանակով ՓՄՁ վարկավորման գործիքի ներդրում, գործող ՓՄՁ-ների նորարարական նախագծերի ֆինանսական աջակցության գործիքի մշակում, գործող ՓՄՁ-ների նորարարական նախագծերի ֆինանսական աջակցության գործիքի ներդրում, «Սկսնակ ձեռնարկատեր» ծրագրի իրականացում և այլն:) Սակայն, ինչպես ներկայացվում է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությամբ, ռազմավարությամբ նախատեսված գործիքակազմից կարելի է առանձնացնել միայն «Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն» ծրագիրը: Մյուս գործողությունները կատարվել են հիմնականում նախկինից շարունակվող ծրագրերի շրջանակներում: Թերակատարվել են նաև նախատեսված գործարար ուսուցողական, տեղեկատվական, խորհրդատվական, աջակցության աշխատանքները, իսկ ՓՄՁ աջակցության համար նախատեսված ֆինանսական միջոցների միայն 68,7%-ն է օգտագործվել:

2021 թվականի կառավարության ծրագրային դրույթներից մի քանիսն արդեն իսկ առկա են ՓՄՁ զարգացման ռազմավարությունում, սակայն կան դրույթներ, որոնց իրականացումը, կարծում ենք, իրատեսական չէ:

Մասնավորապես, ծրագրով նախատեսվում է միջոցառումների իրականացում «Made in Armenia» բրենդի կայացման, մասնավորապես՝ միջազգային շուկաներում հայաստանյան արտադրողների ներկայացվածության և ճանաչելիության աստիճանի բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև ՓՄՁ–ների շրջանակում տեղական արտադրանքի միասնական բրենդի մշակում ու առաջխաղացում արտաքին շուկաներում: Եթե առաջին միջոցառումը տեսականորեն հնարավոր է՝ տարբեր ցուցահանդեսների և համաժողովների կազմակերպման կամ դրանց մասնակցության շնորհիվ (թեև հասկանալի չէ, թե ինչպես է չափվելու ճանաչելիության աստիճանը), ապա անհասկանալի է ՓՄՁ միասնական բրենդի մշակումը և առաջխաղացումը միջազգային շուկայում: Արդյո՞ք դա ենթադրում է «Made in Armenia»-ից բացի այլ բրենդի մշակում: Միթե՞ Հայաստանը նախապատրաստվում է արտաքին շուկայում հանդես գալ երկու բրենդներով՝ տեղական արտադրանք և ՓՄՁ արտադրանք: Այս մոտեցումը խիստ տարօրինակ ցանկություն է և արդեն իսկ ձախողված: Մասնավորապես անհասկանալի է, թե ինչու պետք է լինի ՓՄՁ միասնական բրենդ, որը տարբերվի «Made in Armenia» բրենդից:

Մյուս միջոցառումը, որը կարծում ենք խնդրահարույց է, դա պետության միջամտությունն է ոլորտային ասոցիացիաների ստեղծման գործում: Ասոցիացիաների կամ իրավաբանական անձանց միությունների ձևավորումը ինքնանպատակ չէ: Այդ ոլորտների կազմակերպություններն իրենք են աստիճանաբար հասնում դրանց ձևավորման անհրաժեշտությանը՝ համընդհանուր շահերը պետական և ոչ պետական հատվածում ներկայացնելու և պաշտպանելու նպատակով: Հարկադիր սկզբունքով ձևավորված ասոցիացիաները կամ միությունները չունեն երկար կյանք, քանի որ ձևավորված չեն միասնական խնդիրների և նպատակների շուրջ: Այդ են վկայում Հայաստանում գործող նմանատիպ կառույցների մեծ մասի ներկայիս վիճակը, որոնք ձևավորվել են կա՛մ մեկ անհատի նախաձեռնությամբ, կա՛մ էլ մեկ խնդրի լուծման նպատակով:

Դեռևս անհասկանալի է երկու նոր կառույցների ձևավորման հրամայականը, դրանց իրականացման մոտեցումները և այդ կառույցների գործունեության սկզբունքները: Անհասկանալի է նաև, թե որպես ինչ կառույցի մաս է ստեղծվելու տեխնոլոգիաների և գյուտերի առևտրայնացման կառույցը և սոցիալական նորարարության աջակցության կենտրոնը, արդյո՞ք դրանց աշխատակիցները լինելու են պետական ծառայողներ, թե՞ այդ կառույցների իրավասությունները պատվիրակվելու են մասնավոր կազմակերպությանը, ի՞նչ միջոցների հաշվին են դրանք գործելու, և ի՞նչ նպատակներ ու չափելի ցուցանիշներ են դրվելու այդ կազմակերպությունների աշխատանքային ծրագրերում:

Կարծում ենք՝ նախ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել երկրում գիտության և գիտահետազոտական կարողությունների զարգացման ուղղությամբ, ստեղծել կամ նպաստել ժամանակակից տեխնոլոգիաներով համալրված գիտահետազոտական

լաբորատորիաների ձևավորմանը, ստեղծել պայմաններ միջազգային չափանիշներին և միջազգային պահանջներին համապատասխանող նորարարական տեխնոլոգիաների մշակման կամ գյուտերի հայտնաբերման և տարածման համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2018 թվականի իշխանափոխությունը կասեցրեց ՓՄՁ ոլորտում 2017 թվականին սկսված վիճակագրական տվյալների հավաքագրման մեխանիզմների և ՓՄՁ աջակցության նոր գործիքակազմի ներդրման քայլերը:
2. ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարությունն ընդունվել է միայն 2020 թվականի օգոստոսին՝ փաստացի 2018-2019 թվականներին կառավարությունը գործել է նախորդ իշխանությունների կողմից մշակված ռազմավարական ուղղություններով:
3. 2019 թվականին անհասկանալի պատճառաբանությամբ կրճատվեցին ՓՄՁ զարգացման աջակցության կենտրոնի մարզային աշխատակազմը՝ դրանով իսկ զրկելով մարզերի ՓՄՁ-ներին համապատասխան տեղեկատվության և աջակցության մոտեցումների ներկայացումը և տրամադրումը:
4. Տարածքային ձեռներեցության կենտրոնների մասին 2019 թվականի կառավարության խոստումը չի իրականացվել՝ կենտրոններ չեն բացվել:
5. 2020 թվականի բյուջեից ՓՄՁ աջակցության համար նախատեսված ֆինանսական միջոցներից ծախսվել է ընդամենը 68,7%-ը:
6. 2021 թվականին ընտրված կառավարության ծրագրով նախատեսվում է ՓՄՁ միասնական բրենդի մշակում և «Made in Armenia» բրենդի առաջմղում: Փաստորեն կառավարությունը նախատեսում է հայկական ապրանքների համար ունենալ երկու բրենդ, ինչն անիրատեսական է և չարդարացված: Մասնավորապես անհասկանալի է, թե ինչու պետք է լինի ՓՄՁ միասնական բրենդ, որը տարբերվի «Made in Armenia» բրենդից:

Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն

(շարունակելի)

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*